ԱՍՏՂԱՁԵՎ ԱՐՇԱՎ ԴԵՊԻ ԱՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹԸ

Այդ 1935 թվականի ամռանն էր, շոգ օգոստոսի 18-ը մասսայական արշավ էր կազմակերպվել դեպի Արագածի գագաթը: Միանգամից 1000 հոգի հինգ ուղղություններով, տարբեր կողմերից շարժվեցին դեպի հանրապետության ամենաբարձր լեռնագագաթը: Երևանի ուսանողների խումբը վեր էր բարձրանալու Ղազնաֆար[1] գյուղի ուղղությամբ: Առաջին օրը գիշերեցինք Ղազնաֆարի տարածքում. գիշերը տաք էր, ով որտեղ հարմար էր համարել, այնտեղ էլ քնել էր՝ դաշտում, այգիներում, թփուտների տակ: Ես ինձ հետ վերցրել էի Շինարարական ինստիտուտի հանրակացարանի անկողնու ծածկոց, որի մեջ փաթաթվեցի և քնեցի: Կեսգիշերից հետո զգացվեց լեռնային հովը, ոմանք, այդ թվում և ես մի քիչ մրսել էինք, այդ էր պատճառը, որ երկրորդ օրվա վերելքը դժվարությամբ հաղթահարեցինք: Հասնելով խառնարան, այդտեղ էլ գիշերեցինք, որ հաջորդ առավոտյան պիտի հասնեինք Արագածի չորս գագաթները: Այդտեղ ցուրտը զգացվում էր ավելի որոշակի, քնեցինք խմբերով, որ տաք լինի: Իմ ուսանողական ընկերներից հինգս պատրաստեցինք ընդհանուր անկողին, նկատի ունենալով, որ ես նախորդ օրը մրսել էի, ինձ տեղ հատկացրին անկողնու կենտրոնում, Սուրեն Բաբայանն ու Մանուկ Գոնչյանը ինձնից աջ էին, Վասակ Խաչիկյանը, Վոլոդյա Ղուշյանը Ղուլյան և Գուրգեն Ասլանյանը՝ ինձնից ձախ: Երբ առավոտյան արթնացանք, ես տաք էի քնել և ինձ շատ լավ էի զգում, իսկ եզրայինները մրսել էին և վատ տրամադրություն ունեին: Լուսաբացին գագաթի գրոհը սկսելուց առաջ պարզվեց, որ շատերը չեն ցանկանում մասնակցել վերջին վերելքին, այն դժվար էր լինելու և բացի այդ լեռան խառնարանը հասնելը նշանակում էր, որ բարձրացել են լեռան գագաթը: Ես համարձակվեցի և առանց հիշյալ ընկերների, մենակ սկսեցի բարձրանալ: Ճանապարհի որոշ մասում նկատեցի, որ ինձնից առաջ բարձրացողներ կան, ինձնից հետո՝ ոչ: Եվ այդպես, առանց շտապելու, աշխատելով հանգիստ հաղթահարել վերելքը թեպետ մի քիչ զգացվում էր օդի պակասը, բայց ես կարողացա հասնել

[1] Այժմ՝ գյուղ Արագած (Ծ.Կ.):

հյուսիսային գագաթը, որի բարձրությունը ծովի մակերևույթից բարձր է 4095 մետր, մյուս գագաթները համեմատաբար ցածր են: Երբ հասա գագաթը, արդեն այնտեղ էին հինգ, թե վեց հոգի: Նրանք, որ նույնպես երիտասարդ էին, մեկը միջին տարիքի, ուներ ալպինիստի ձեռնափայտ, մի փոքր […] և գլխարկ. նա նստել էր մի բարձր քարի վրա, մյուսները նրան շրջապատել ու լսում էին նրա պատմածները, որոնց էությանը ես մնացի անտեղյակ, քանի որ վերջինն էի հասել: Երբ ես հասա նրանց, մի հինգ րոպե սպասելուց հետո սկսեցին իրենց վայրէջքը: Ես նորից մնացի մենակ: Դիտեցի արևածագը. առաջինը լուսավորվել էր Արագածի գագաթը, կովկասյան լեռնագագաթ-ները չտեսա, թեպետ ոմանք ասում էին, թե երևում են՝ գուցե լավ հեռադիտակով, որպիսին ես ինձ հետ չունեի: Այդտեղ ցանկություն առաջացավ տեսնել լեռան նաև հյուսիսային լանջը. որքան ձգվեցի, լավ չերևաց, ավելի ձգվեցի և ահ զգալով նկատեցի, որ այդ կողմից ուղղաձիգ անդունդ է, հետ քաշվեցի և ինչ-որ անզուգական մենակու-թյուն զգալով սկսեցի իմ վայրէջքը, նոր բարձրացողների չհանդիպելով: Ինձնից առաջ իջնողները դեռ չէին հասել խառնարան, դրա համար էլ զգույշ էի իջնում, անզգույշ լինելիս առանձին քարեր տեղից պոկվում գլորվում էին ցած, վտանգում ներքևում իջնողներին: Երբ իջա, գտա իմ ընկերներին, պատմեցի, նրանցից իմացա, որ գագաթ բարձրացած միջահասակ մարդը պատմաբան Աշխարհբեկ Քալանթարն է եղել, որին ես սկզբում չէի ճանաչել:

Հետո պարզվեց, որ մյուս երեք գագաթները բարձրացել էին համեմատաբար շատ տուրիստներ, բայց այնուամենայնիվ մասսայական չի եղել: Խառնարանի լճափի բոլոր կողմերում շարժում կար, այնտեղ կինոնկարահանում էր կատարվել, որին ես չէի կարողացել մասնակցել: Հանգստանալուց հետո սկսվեց մասսայական վայրէջքը, ստորոտում սպասող բեռնատար ավտոմեքենաները լցվելով բավական ուշ՝ գիշերը հասանք Երևան:

Տարիներ անց, իր պատմածի համաձայն, Հայհիդրոնախագծի պլան. բաժնի ղեկավար Սուրեն Դավթյանը եղել է այն 5-6 երիտասարդներից մեկը, որն Աշխարհբեկ Քալանթարի առաջնորդությամբ բարձրացել էր այն գագաթը, որոնց միացա և ես: Ավելի

ուշ հանրապետական թերթերից մեկում բանակի հայ գեներալներից մեկը, որ եղել էր այդ 5-6 երիտասարդներից մեկը, կոչ էր արել, որ արձագանքեմ, հավաքվեմ հանդիպ-ման, որը, կարծեմ որ տեղի չէր ունեցել: Իմ ուսանողական ընկերներից նրանք, որոնց հետ Արագածի խառնարանում մի գիշեր ընդհանուր անկողնում քնել էինք, նրանցից այժմ ոչ ոք չկա: Գոնչյանն ու Ասլանյանը զոհվեցին պատերազմում, Բաբայան Սուրենը, որպես տրոցկիստի կրտսեր եղբայր, 17 տարի Մագադանում իր խաչը կրելուց հետո վերադարձավ Երևան, անվանի շինարար էր: Վասակն ու Վոլոդյան, որ նույնպես կառուցման մեծ վաստակ ունեցան, վախճանվեցին վերջերս: Եթե դեռ կան ողջ ու առողջ ակամա ալպինիստներից, վատ չէր լինի հանդիպել, հիշել:

***Նկ. 1** – Արագածի հարավային գագաթը և Քարի լիճը (լուս. ՝Աշխարհբեկ Քալանթարի)*

Ինչու՞ հիմա ևս այդ գործը մասսայական բացթող չեն կազմակերպում՝ 1000, 2000 հոգով բարձրանան Արագած, տպավորությունները պահպանեն հիշողության մեջ: Երբ երիտասարդ էինք, երազում էինք հնարավորություն ստանալ Արարատ բարձրանալ փորձել: Մեզ այդ չհաջողվեց: Թերևս ուրիշներին՝ նոր սերնդի երիտասարդներին երբևէ հաջողվի:

29.7.96 ՏՄ